ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 23 հուլիսի 2018 թվականի N 68

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. 2018 թվականի հուլիսի 26-ին՝ ժամը 11$^{00}$-ին, գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.

1) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքները քննարկելու մասին
2) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 34 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
3) Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը հաստատելու մասին
4) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 57-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2. Պարտավորեցնել աշխատակազմի քարտուղար Արմինե Զաքարյանին՝ օրենքով սահմանված կարգով ավագանու անդամներին տրամադրելու արտահերթ նիստի օրակարգը, ընդգրկվելիք հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2018 թ. հուլիսի 23**

**գ. Նոր Արտամետ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հուլիսի 2018 թվականի N 69**

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի, Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 53 և N 57-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքի բյուջեի 4726՝ հուղարկավորության նպաստներ, հոդվածից 90.0 /իննսուն հազար/ դրամ հատկացնել համայնքի ներքոհիշյալ բնակիչներին.
   1) Առաքելյան Մանե Բաբկենի՝ 30.0 /երեսուն հազար/ դրամ.
   2) Գրիգորյան Արմեն Գրիգորի՝ 30.0 /երեսուն հազար/ դրամ.
   3) Չիթչյան Սերգեյ Շալիկոյի՝ 30.0 /երեսուն հազար/ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2018 թ. հուլիսի 27**

**գ. Նոր Արտամետ**